


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԱ
Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Ի հիւսիս մեկ ծարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Բ Ա Գ Ի Բ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ը ՀՐԱՏԱՐԱՐԱԿՈՒ Ի ԱՄՆԵՆ ԶՈՐԵԲՇԱՐՔԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Տ Է

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА

Գրութիւնք եւս
չեն տրուիր

ԱՐՏԱՏԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԸ

Մի շարք յօդուածներով մենք առաջ նետեցինք, կրկնեցինք, չեղտեցինք, նայելով նրա վերայ ազգային և յեղափոխական փրկիկականի և բարոյականի բարձր կրկնակի տեսակետներէ, այն միտքը թէ անհրաժեշտ է անմիջապէս, կարելի եղածին չափ շուտով, ձեռք առնել հաւաքաբար ամեն հարկաւոր միջոց՝ վերացնելու համար գոյութիւն ունեցող միմեանց դէմ միմեանց դէմ միմեանց դէմ միմեանց և միմեանց դէմ միմեանց և կենաց կռիւ մղող յեղափոխական ուրոյն կուսակցութիւնները և նրանց վերածելու համար մի և ընդհանուր յեղափոխական մարմնի, օժտելով սրան գործունէութեան միեւնոյն ծրագրով, միեւնոյն ուղղութեամբ:

Այդ անհրաժեշտութիւնը մենք դրինք և գնում ենք որպէս առաջին և միակ պայման իրագործելու համար այն նպատակը, որ կազմուի է, անցնող պատմական րոպէներում, ամբողջ Հայութեան միակ գոյութեան իրաւունքը, միակ գոյութեան յայտը, միակ գոյութեան հաւաքանքը:

Երկար տարիների փորձը, որը մենք ձեռք բերինք յեղափոխական ասպարէզի վերայ, մնալով և գործելով միշտ զուտ կուսակցական գործունէութեան շրջանակի մէջ, այն եզրակացութեան յանգեցրեց մեզ, որ այդ է միակ ելքը, այդ է միակ միջոցը դուրս գալու համար նախ այն քառից, այն լարելութիւնից, այն սոսկալի բարեւոյնից, որը կազմել են, ստեղծել են իրենք, յեղափոխականները, և ոչ գնալով կաշիս սպառնում է կատարել պատուհաս գաւնալ ազգային ճակատագրին, և ապա, միաբան ոյթելով, միաբան ոգւով ու գործունէութեամբ, յաջողութեամբ տանելու այն գուցէ վերջնական կռիւը, որի վերջը սպասում է միահամուռ Ազգին—մահ կամ ազատութիւն:

Այս եզրակացութիւնը, սակայն, մերը չէ միայն. մեզ յատուկ չէ միայն: Սոյն այս եզրակացութեան յանգած են նաեւ շատ շատեր այնպիսի գործիչներէ, որոնք յեղափոխական խիստ կարեւոր, խիստ յորդելի անցեալ ունին թողած իրենց ետեւը:

Միութեանական կուսակցութեան ամբողջ բանակը այդպիսի յեղափոխականների նախաձեռնութեան արդիւնքն է. իսկ այդ կուսակցութիւնը, գիտենք, ուրիշ բան չունի իւր գործակի վերայ՝ բայց եթէ կուսակցութիւններ Միութիւնը յանուն ընդհանուր և մի Հայկերի, յանուն ընդհանուր և մի Հայ Ազգի ազատագրութեան գործին:

Միեւնոյն այդ եզրակացութեան են հասած բոլոր չեզոք անունով յիշատակուած տարրերը, բայց մանաւանդ նորագոյն սերնդին պատկանող երիտասարդների ստուար մեծամասնութիւնը, որ իւր յեղափոխական մտքերն ու զգացումները չէ՛ վերցնում այլ եւս կենդանութիւնից զուրկ և այժմէութիւնից դադարած զուտ գաղափարային և կենդանի կեանքի մակերեսային վեր գտնուող ծրագրիներէ, այլ անմիջական այրուող ազգային ազատութեան հարցից, մօտիկ անցեալի յեղափոխական կենդանի պատմական դէպքերից, յաւիտեան անմոռանալի արիւնքով թուականներից, վերջապէս հարկւր հաշարաւոր Հայ նահատակների վրէժխնդիր յիշատակից ու իրենց անձնագահութեամբ, քաջութեամբ ու սիրագործութիւններով յայտնի անթիւ անհամար, անխոր բոլոր կուսակցութիւններին պատկանող, անմահ հերոսներից, որոնց շատեր, որպէս կենդանի մեռածներ, հիւժուում են թշնամու բանտերում:

Մենք շատ տեսանք այդպիսի երիտասարդների, որոնց միտքը, որոնց աչքը նոր բացուած Սասկալի իրականութեան առաջ, որոնք, սակայն, մեզ, յեղափոխական ասպարէզի վերայ հեն-

րիս պէս, խմորուած, կերուած, կոշտացած, փէտացած, կարծրացած, ամեն առաձգականութիւն կորցրած չեն ծրագրային նրբութիւնների, շատ անգամ միջնադարեան սխալատիկայի չեցնող անմիտ ու անիմաստ վէճերի, հակասութիւնների, իմաստակութիւնների մէջ, որոնք հայկական կեանքի, հայկական այդ իրականութեան վերայ նախաւ են նախ և առաջ իրենց սովորական առաջ մտքով, առաջ զատողութեամբ, մնում են ուղղակի զարմացած, շուարած, չփոթուած և հարցնում են թէ մի՞թէ՞ կարելի է ազգային քաղաքական ասպարէզի վերայ այս ասպարէզի տգիտութիւն, այս աստիճան անմտութիւն, — թողնել ընդհանուր թշնամին և ոչնչացնել միմեանց . . .

Վերջապէս միեւնոյն այդ եզրակացութեան է, վաղուց իվեր, անխոր բոլոր հայ ժողովուրդը: Այդ իմաստով է և կարող է վերջել, եթէ միայն անկեղծ է, եթէ միայն չէ կուրացած կուսակցամոլութեամբ, ամեն նա՛ որ դուրս եկած կարեւորագոյն միութնորտից՝ մօտիկ շօշափուել է նրա հետ, մօտիկ դիմել է նրա նեքքին, խոր և անկեղծ զգացումներին ու համոզման:

Վերջապէս այդ միեւնոյն եզրակացութեան են հասել, անտարակոյս, բոլոր անկեղծ յեղափոխականները, նայն իսկ բոլոր յեղափոխական կուսակցութիւնները, ինչպէս այդ մենք ցոյց տուինք մեր անցեալ յօդուածում մէջ բերուած ընդհանուր Միութեան նկատմամբ կատարուած անհրաժեշտ փաստերի վերայ:

Այսպէս, ամեն տեղ, ամեն կէտի վերայ, ամեն շրջանում, կուսակցական և ոչ կուսակցական, ամենքը զուրկ են, մոտածում են, խոստովանում են, համոզուում են, որ այդ է միակ հնարը, այդ է միակ փրկութիւնը, որ հարկաւոր է միանալ, որ հարկաւոր է վերացնել կուսակցութիւնները, որպէս հիմնական, որպէս արմատական միջոց՝ մի անգամ ընդ միշտ գարմանելու համար դուր-

թիւնը, կասեցնելու համար ամեն կարգի բարոյական և փիզիկական եղբայրասպանութիւն և վերագործակցութեան համար ամենին, ժողովուրդին, ինչպէս նաեւ իրենց, յեղափոխականներին, այն ամեն գործունէութեան անհրաժեշտ ոգին ու հաւատքը, եռանդն ու կարողը, առանց որի չկայ գործ, չկայ կեանք, չկայ ո՛չ անհատական և ո՛չ ազգային հաւաքական կամք:

Այս իրողութեան հաստատութիւնը, որը մենք անում ենք ընդհանուր Միութեան գաղափարի նկատմամբ բոլոր կուսակցական և ոչ կուսակցական շրջաններում, պէտք է ուրախութեամբ ստենք, կազմուի է ամենադրական կողմը, ամենամիտ թարական երեսոյթը մեր ընդհանուր ներկայ խիստ տխուր պատկերի վերայ, որ գրեթէ բացառապէս բացատկան է: Նա մեզ յաւաքում է և հոգեպէս կազդուում է մօտիկ ապագայի վերաբերութեամբ:

Կարելի է աներկիւղ, գրեթէ բացարձակ ասել որ ոչ ոք դէմ է Միութեան, գոնէ սկզբունքով, որ չկայ ոչ մի բաղաձայն նստա ընդհանուր ներդաշնակութեան մէջ, որ ամենքը միաձայն ազգակուր են որ գա՛յ այդ Միութիւնը:

Անշուշտ, մենք չենք կարող անդիտանալ անհատներ, նայն իսկ կուսակցական օրդաններ, որոնք, անկարող դիպչելու Միութեան սկզբունքին, կուզենային, սակայն, որ նա կատարուէր ոչ այն կերպով և ուղղութեամբ, ինչպէս մենք ենք հասկանում, ինչպէս ամենքն են հասկանում սովորաբար: Բայց այս կերպի, մէթոդի խնդիր է եւ ոչ սկզբունքի: Նրանց ցանկութեան նայելով, իրենց պատկանած կուսակցութիւնից դուրս գտնուողները ուրիշ բան չունին անելու, բայց եթէ, առանց այլեւայլի, առանց աջ ուձաչի մօտիկ անելու, գնան ու միանան իրենց կուսակցութեան հետ, ընկղմին նրա մէջ և ձուլուին նրա հետ: Նը-

է միտքին մէջ. առողջ միտքը առողջ մարմնին մէջ փնտռելու գաղափարը թոյլ չի տար անոր ազգը շատ զրադեցնել. ողան հաճոյքով պէտք է սորվի. եւ որովհետեւ ամէն սարկը իր մասնաւոր հաճոյքն ունի, մեր նոր միտքին ալ կը ջանայ ժողովուրդին մէջ տարբարանել սա ճշմարտութիւնը թէ՛ աղան պէտք է աւելի խաղայ քան թէ զրադի. ուստի տարածում պատշաճն էր մանկավարժին քմահաճոյքէն ծընունդ առած—յաճախ իրարու կը յաջորդեն՝ աղուն փրկիքականը զորոյցներու նպատակով:

Որքան լաւ եղած պիտի ըլլար սակայն իմէ՛ս այս մէթոտը իրեն համընթաց ունենար մասնաւորականը զարգացնելու բաժին մըն ալ. ցու ի սիրտ պէտք է խոստովանիլ թէ այս վերջինը զանց առնուած է. չափազանցութիւնը հոս ալ ունեցած է իր միտքական դերը, այնպէս որ աշակերտները զիւրեք շրջապատող իրերուն վրայ գաղափար իսկ չեն կրցած ունեւել (խոստովանութիւն նախկին աշակերտի մը):

Այս անակ յըջան մը ունեցած է Սիւրխաթէի վարժարանը անկէ մօտաւորապէս 6-7 տարի առաջ. նման շրջան մըն ալ ունեցած է Ռուսմուք մինչեւ 1893 թուականը. Բայց քանի որ Ռուսմուքի վարժարաններուն վրայ բաւական տեղեկութիւններ տրուած են ըլլայ տեղական, ըլլայ արտասահմանեան թերթերու մէջ, հարկ կը համարվի հոս ծաւալաւ Սիւրխաթէի վարժարաններուն վրայ. անոնք ներկայիս մէջ բոլորովին տարբեր պայմաններ կը վայելին. գիտակից պաշտօնէութիւններ վերացած են տալ անոնց նախնական զիճակ մը շնորհիւ նպատակաւոր պայմաններու:

Ինչո՞ւ նպատակաւոր կը կոչենք զանոնք:

Հայաքերթի վերջին թիւերէն մէկուն մէջ շատ իրաւացի կերպով գրուած յօդուած մը որոշակի կը ցուցնէր թէ վարժարան մը պահելու համար բաւական չէ վարժապետ մը, վարժուհի մը եւ տիրացու մը պահելը—հետեւեալք պիտո՞ճէ անբաւականութեան. վարժարան մը երբ քաղկացած կըլլայ չորս կարգերէ եւ կընդունի տարբարական նախակրթարաններու համար պատրաստուած ծրագիր մը, քնակաւարար կամ աւանդուկներ, աւանդականներէն մէկ մասը պիտի վտարէ կարեւոր համարուածները (?) աւանդիկ կարենայու համար եւ կամ օրական 12 ժամ դաս պիտի հաստատէ բոլոր առարկաներն անխափ աւանդիկու համար. երկուքէն մէկը կամ այն է որ փոքրիկները պիտի դնուին, վասնզի մեր մէջ անոնց բնաւ կարեւորութիւն չէ տրուած մինչեւ վերջին ժամանակներս նոյն իսկ անցեալ տարի Սիւրխաթէի Ա. կարգի փոքրիկները պատուութիւն, Աշխարհագրութիւն, Իրադիտութիւն, Գեղարվեստութիւն, Գծադրութիւն չեն առած. եւ բնական է որ չառնէին վասնզի ինչպէս ըսինք, այլապէս կարելի չի պիտի ըլլար բոլոր դասերուն հասնիլ, եւ կամ պէտք պիտի ըլլայ վարժապետներուն թիւը շատցնել:

Սիւրխաթէի վարժարանները, ընդունելով Ազգ. Կեդր. վարչութեան Ուսումնական խորհուրդի եւ պուլկարական նախակրթարաններու ծրագրին վրայ չափուած ծրագիր մը այս ատրի յաջող կերպով պիտի կարենան զայն զործադրել քանի որ անօրէն ուսուցչները վարժուհի եւ օգնական երաժիշտ դասատուներ մը խնամքներուն տակ երեք կարգեր կը պահեն. այս կարգերուն համար ուսուցչներու յիշեալ քանակութիւնը կրնայ բաւարար հո-

մարտիլ. արդէն առաջին եռամեան ցոյց կուտայ թէ երկուս աշակերտները բաւականաչափ պաշար ջանքած են չընորհիւ ուսուցչներուն ի գործ դրած խղճամբով ջանքերուն:

Արդ. կարեւոր է դիտել տալ Հոգաբարձու պաշտօնէութիւններու եւ պաշտօնախոյ ուսուցչներու թէ վարժարանի մը մէջ օգտակար հանդիսանալու ամենապակաս պայմաններէն մէկն է՝ այդ վարժարանին ներքին կազմին վրայ հիմնուած գործի ձեռնարկելը. Ա. սակ չեմ կրնար զարմանալ չայտնել վարժապետի մը որ անցեալ տարի պարծանքով (!) մը կը յայտնէր թէ հինգերորդ կարգ կը պահեն Շուվրայի վարժարանին մէջ, որուն սեմէն հաւանականաբար չորս վարժապետն աւելին չկրնար ներս տալ կոխել—սխառեմէն անձկութեան պատճառաւ:

... Եւ մենք մանկավարժներ կը մտնուանք մեր մէջ՝ վայելուն ցոյցերու ներկայ պրօֆէսէօրները... պատրաստ:

Սիւրխաթէի գոհ է այսօր իր վարժարաններէն եւ ջերմ կերպով փարած անոր. բայց թէ ինչ միջոցներով կարելի պիտի ըլլայ զանոնք իրենց նախնական վիճակին մէջ պահելը, այդ մասին կանխարարանք ուրիշ արթիւն:

ԱՆՑՈՐԴ

28 Նոյեմբ. 1903

Պ. ՍԱՐԱՅՈՎԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Պ. Մինցեյ. Վիեննայի Ձայթլրագրոյ խմբագիրներէն մին վերջերս շահաքերական տեսակցութիւն ունեցաւ Վիեննայի մէջ Պօրիս Սարաֆովի հետ. Խօսակցութիւնը դարձաւ Մակեդոնական ապստամբութեան վերայ. ներքին կազմակերպութիւնը ըսաւ Սարաֆով ժողովրդական քուէարկութեան նման բան մը պիտի ընէ. որպէսզի գիտնայ թէ Մակեդոնիոյ բնակչութիւնը պիտի փախարթ՝ ապստամբութիւնը շարունակել նաեւ յառաջիկայ դարնոս: Իմ մասնաւոր կարծիքս է, յարեց Սարաֆով, որ ժողովուրդը չորէն պէնքի պիտի փարի, որովհետեւ մեզ մակեդոնական կառուչներու համար ետ գառնալ չկայ. Առանց լաւատես ըլլալու, առանց ցնորակիւն ըլլալու, չենք կրնար այլեւս դադրել: Յեղափոխութիւնը կանուխ կամ ուշ պէտք է նորէն պայթի:

Սերպիան ալ կը պատրաստուի յառաջիկայ ամառ ապստամբութիւն կազմակերպելու հին Սերպիոյ մէջ (Ժուրբիոյ մէջ) ընդհանրապէս հան, ուր Սերպերը հո՞ծ են: Սերպիոյ մէջ մենք գործ չունեցանք նախարարներու եւ պետական անձերու հետ, ըսաւ Սարաֆով—բայց կըցանք հասնիլ որ թագաւորութեան բնակչութիւնը կրնայ համակրութեամբ վերաբերուիլ դէպի զուտ Սերպո Պուլկարական գործողութեան մը «Մակեդոնիան Մակե-

դոնիոյ համար» ի հիման վրայ: Ռուսները, ըսաւ Սարաֆով, անյարմար գտնուեցան Մակեդոնական ժողովուրդին համակրութիւնը շահելու: Բայց այս նկատմամբ Աստորիացիք խելացի հանգիստացան: Հուսկ ապա Սարաֆով յայտնեց թէ մեծ է իր հաւատքը պարագաներուն վրայ եւ թէ երեք Հարաւային տերութիւնները Խալիլա, Փրանսա եւ Անգլիա շահ ունին Մակեդոնիոյ մէջ հրատարակելիք քաղաքական ինքնորինութեան մը:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

— Եւստօ —

Տարածաշրջութեան մը համաձայն կը տեղեկանամ թէ Վառնայի Թագ. Խորհուրդը, սակարկութեան մը մէջ կը գտնուի եւ արդէն իսկ համաձայնած են գնոյն վերայ, տեղւոյս ազգայիններէն միոյն Տիար Մ. հճ. Ս. Ի. սեպհակաւորութիւնը եղող «Օհրիտ» փողոցին մէջ գտնուող խանութը ծախու առնել 90 դաղ. ոսկի փոխարէքով:

Առանց ոեւէ առաքելութեան մ'ընելու չէնքին գնոյն կամ առաւելութեան կամ նուազութեան մասին. կը հարցնիմ Թագ. Խորհուրդին, թէ անտեսադիտական ինչ հաշիւներու վրայ չափելով, այդ գնումը կը կատարուի փանդի քաղաքիս այդ բաժինը, մօտիկ ապագային թլաւ ի ներկայ լինելով, գնոյնի միացործ մասին վրայ, չենք կարծեր որ կառավարութիւնը ոեւէ չէնք մը կառուցումը թոյլատրէ, կարծէ որ Թագ. Խորհուրդը այս մասին մի քիչ մտածէ:

Վ.

ՇՆՈՐՀԱՅԱԼԻՔ

— Եւստօ —

Նաեւ լեւա գերաստական խումբս պարագայից բերմամբ Վառնայի մէկին ստիպուելով, կուգայ իր խորին շնորհակալութիւնը յայտնել այս քաղաքի հայ թատերասիրաց, որոնք ամէն անգամ իրենց չը վարանեցան մեզ քաջալարել, նոյն իսկ խումբիս թերի կազմութեան օրերուն մէջ: Կը խոստանանք այս առթիւ յառաջիկայ դարնոս շրջանին Վառնայի թատերասերները մերով սանն գոհացնել նորագոյն եւ ընտրեալ խաղերով:

ՆԱՏԵՃՏԱ ԽՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ

Տ. Վահան վարդ. Յակոբեան գրով մը շնորհակալութիւն յայտնեց Պատրիարքարանին, իրեն եպիսկոպոսական աստիճան տրուելու որոշումին, ինչպէս նաեւ Ռուսմանիոյ Պատրիարքական փոխանորդ անուանուելուն համար, եւ պատրաստականութիւն յայտնեց իր Պառնայի հոգեւոր հովուութիւնը ընդունելու խնդրելով միանգամայն որ իր նոր պաշտօնադրերը շուտով զրկուին իրեն:

Ըստ մեզ Պատրիարքարանը սխալ ընտրութիւն մը ըրած է

յանձին Տ. Վահան վարդապետի կերեւայ թէ ազգային կեդր. վարչութիւնը լաւ չէ ուսումնասիրած Պուլկարիոյ եւ Ռուսմանիոյ միջեւ եղած մեծ տարբերութիւնը եւ Պուլկարիոյ առաջնորդական ընտրութիւնը Տ. Վահան Վր. Ի. գործունէութեան մէկ արդիւնքը կը նկատէ, որ ճիշդ չէ. սրովհետեւ Պուլկարահայերը Առաջնորդ մը ունենալու բաղկացող եղած էին միշտ. մինչդեռ Ռուսմանիոյ Հայոց ազգեցիկ մասը առաջնորդարանի մը հաստատութեան կը հակառակի. նաեւ երկրին հանգամանքները շատ կը տաքեցնեն Պուլկարիան. հետեւեալէս կարող, բանիւրուն եւ լեզուագէտ եկեղեցական մը պէտք էր զրկել հոն Մենք կը կարծենք թէ Վահան վարդապետի պէս մէկը այդ գծուարին գործը զուխ չը կրնալ հանելէ զատ, երկար ժամանակի մը համար ալ անկարելիութեան կը մատնէ:

Մեր այս տողերը յուետուսութիւն պէտք չէ նկատել, մենք քաղճացող ենք որ Ռուսմանահայը ունենայ իր առաջնորդը եւ ազգային կազմամեթոքութիւնը որպէսզի կարողանէ փրկուի. բայց Տ. Վահան վարդապետ Ռուսմանիոյ համար այդ գործին մարդը չէ:

Երանի թէ այս տողերով մենք սխալած ըլլայինք:

— ԿԱՆՈՅ ԵՐԿՐԱՅԱՐԺԷՆ ՖԻՏՈՒՆՈՒՄԸ ԵԿԵՂԵՑԻԻ ՆՈՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆԱՐՄԱԾ ԸԼԼԱՂՈՎ, ՎԱՅՈՇՈՒՄԸ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՆԵՐԷ՝ ԵՄԵՂՆՈՅՆ ԱՌԱՋՆՈՐԴ Տ, ԶԱԷՆ Վ. Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԸ:

— ՌՈՒՄԵՆՈՒԹԻ ԹԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ ԲՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՄԱՐԱԹԵԱՄԸ ԿԱՏԱՐԵԼ ԶԵԼՈՒՑՈՒԾ ԵՐԵՄԱՆԴՈՒՆԸ Է ՇՆՈՐՀԻՒՆ ԵՄԵՂՈՅՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿԻՑ ԶԱՆԵՐՈՒՆ ՈՒ ԲՈՂՈՒՆԸ:

Նոյնիսկ Թագ. Խորհուրդոյ անգամայն եւ ընդլայն երիտասարդներու միջեւ կայացած համաձայնութեամբ մը ընտրութիւնը պիտի կատարուի Պուլկարիոյ Առաջնորդ Սրբազանին գալէն յետոյ: Ուշայի ենք թէ այս կերպով գահալէժ ու սխալ քայլ մը առնելէ կըցան զգուշանալ Ռուսմանիոյ, որոնք շատ ու շատ պարագաներու մէջ գիտցած են Պուլկարիոյ ուրիշ քաղաքաց օրինակելի քայլի առնել, բայց այս պարագային մէջ անհունապէս պիտի սխալէին թէ վերջին ժամուն սթափած չըլլային:

— «ՆԱՏԵՃՏՈՒՄ» ԳԵՐԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԸ ԶԱՂԻՒ ԻՐ ՎԱԿԱՍ ԱՆՊԱՆԵՐԸ ԸՐԱՅՈՒՑՅԱԾ ԵՎ ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԼՈՒՂ ԽԱՂԵՐ ՆԵՐԿԱՅԱՅՆԵԼ ՍԿՍԱԾ, ՄԵԿՆԵՑԱԾ ԲԱՅՈՒՄԸ: ՎԱՌՆԱՅԻ ԹԱՏԵՐԱՍԵՐ ՀԱՅ ՀԱՍՏԱՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՈՐ չԹԵՐԵՑԱԾ ԽՈՒՄԸ ԻՐ ԱՆԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԲԱՅՈՒՆ ԻՐԱՆ, ԻՐԱՆԱՄԸ ԿԱԿՆԿԱԼԵՐ ՈՐ ՍԱ ԱՂ ԻՐ

Одговорникъ Н. Драгулевъ